ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA

«03» 03 2026 թ.
№ կաատ2/420

«Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊԸ -ին
ՀՎՀՀ 02294699
ՀՀ, ք. Երևան, Բագրատունյաց 70/22
էլ. փոստի հասցե՝ sag@krafthem.am
Հեռ.՝ 094 098 838

ՀՀ պաշտպանության նախարարության և «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 18.03.2024թ. կնքված N ՓՊՄԱՊՁԲ-25-7/6-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում /Համաձայնագիր N 1, առ. 13.05.2025թ/ Ընկերությունը պետք է մատակարարեր յուղեր և քսուքներ, որից 300կգ. Շարժիչի յուղեր /Շարժիչի յուղ՝ երկտակտային շարժիչների համար/ Համաձայնագրի կնքումից հետո՝ 60 օրացուցային օրվա ընթացքում և 20 կգ. Հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ /ՊԷՍ-2/ Համաձայնագրի կնքումից հետո՝ 150 օրացուցային օրվա ընթացքում: Ընկերությունը սահմանված ժամկետում չի մատակարարել 300կգ. Շարժիչի յուղեր /Շարժիչի յուղ՝ երկտակտային շարժիչների համար/ և 20կգ. Հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ /ՊԷՍ-2/ ապրանքատեսակները, սակայն վերոնշյալ քսուքները ընկերության կողմից մատակարարվել է 2025թ. հոկտեմբերի 3-ին և դեկտեմբերի 11-ին, որը տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով չի ընդունվել: Ինչպես նաև մատակարարի կողմից էականորեն խախտվել է պայմանագրի կատարման ժամկետը մասնավորապես՝ Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ԱՄԳ-10/ և /Քսուք ԱՏԼԱՆՏԱ (Վնիի ՆՊ-254)/ քսուքի մատակարարումը պետք է իրականացվեր՝ ոչ ուշ 2025թ. հուլիսի 12-ը, իսկ Քսուքներ /ԱՄՍ-3/ քսուքինը՝ ոչ ուշ 2025թ. հոկտեմբերի 10-ը, սակայն 18կգ. ԱՄԳ-10 յուղի, 1կգ ԱՏԼԱՆՏԱ (Վնիի ՆՊ-254) և 8կգ. ԱՄՍ-3 քսուքների մատակարարում չի իրականացվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7,1 կետի «ա և բ » ենթակետերը (Շարժիչի յուղեր /Շարժիչի յուղ՝ երկտակտային շարժիչների համար/, Հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ /ՊԷՍ-2/, Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

օգտագործվող յուղեր /ԱՄԳ-10/, /Քսուք ԱՏԼԱՆՏԱ (Վնիի ՆՊ-254)/, և Քսուքներ /ԱՄՍ-3/ ի մասով մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում և խախտվել է ապրանքնի մատակարարման ժամկետը): ՀՀ պաշտպանության նախարարությունը 2026թ. մարտի 3-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը և Համաձայնագիրը (Շարժիչի յուղեր /Շարժիչի յուղ՝ երկտակտային շարժիչների համար/, Հիդրավլիկ փոխանցումների համար օգտագործվող հեղուկներ /ՊԷՍ-2/, Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ԱՄԳ-10/, /Քսուք ԱՏԼԱՆՏԱ (Վնիի ՆՊ-254)/, և Քսուքներ /ԱՄՍ-3/ ի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 65 011 ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն) և 67 887 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 29.12.2026թ. ներառյալ, ինչպես նաև Պայմանագրի հավելված 1 7-րդ կետի համաձայն ենթակա է գանձման 33 000 ՀՀ դրամ:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 1 696 616 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 619 038 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Միաժամանակ տեղեկացնում եմ մինչև 2026թ. մարտի 13-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված 1 696 616 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 619 038 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, և ապա «Կրաֆտհեմտեխնոլոջի» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2026թ. մարտի 13-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ